ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/30

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 04.03.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը.

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ է զբաղեցրել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 10-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է՝ առաջարկել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2.1 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և նույն արձանագրության 2.1 կետով որոշեց մերժել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում

մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ինչպես արդեն նշվել է, «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին (the.best.shin@mail.ru) armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 20.02.2019թ. ստացել է ծանուցում, որի համաձայն Ընկերությանը առաջարկվել է ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի հանձնաժողովի քարտուղարի gnumner@cadastre.am էլեկտրոնային հասցեին:

Ընկերության էլեկտրոնային the.best.shin@mail.ru հասցեից 22.02.2019թ. ուղարկել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Վերոհիշյալ փաստը, այն է՝ «Դը բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովին ներկայացնելը, կարող է հաստատվել նաև համապատասխան ապացույցներով:

Սակայն, ինչպես հետագայում պարզվել է, անհասկանալի պատճառներով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ս.թ. փետրվարի 27-ին ստանալով Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը՝ Ընկերության ներկայացուցիչը նամակ է ուղարկել Պատվիրատուին, որով հայտնել հետևյալը. «Խնդրում ենք Ձեզ ուշադիր նայել էլեկտրոնային փոստը, որովհետև 22 փետրվարի 2019 թվականին ժամը 16:41 Ձեզ ենք ուղղարկել որակավորման փաստաթղթերը»:

Ի պատասխան վերոնշված նամակին՝ Պատվիրատուի գնումների կազմակերպման բաժինը պատասխանել է. «Հարգելի գործընկեր, հայտնում ենք Ձեզ, որ օրենքով սահմանված ժամկետում որակավորումը հիմնավորող փաստաթղթերը gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստին չի ստացվել, որի հետևանքով գնահատող հանձնաժողովը մերժել է Ձեր հայտը»:

Ընկերության ներկայացուցիչը այցելել է Պատվիրատուր գնումների կազմակերպման բաժին, տեղում բացել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին պատկանող the.best.shin@mail.ru էլ. փոստը

և աշխատակցին ներկայացրել 22.02.2019թ. Ընկերության կողմից որակավորման փաստաթղթերը ուղարկված լինելու համապատասխան ապացույցը:

Արդյունքում «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին հայտնել են, որ Ընկերությանը պատկանող էլ. հասցեից որևէ որակավորման փաստաթուղթ չեն ստացվել և այդ հիմքով մերժել են Ընկերության ներկայացրած հայտը:

Այնուհետև «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն Ընկերությանը պատկանող the.best.shin@mail.ru էլ. փոստից Պատվիրատուի gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստին վերահասցեագրել է 22.02.2019թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու նամակը՝ կրկին ի ապացույց այն փաստի, որ սահմանված ժակետում ներկայացվել են պահանջված փաստաթղթերը:

Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, երբ «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն դեռևս 22.02.2019թ. ընթացակարգի քարտուղարի էլ. հասցեին (gnumner@cadastre.am) է ուղարկել որակավորման փաստաթղթերը, սակայն արձանագրվել է, որ Ընկերությունը չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը և արդյունքում մասնակցի հայտը մերժվել է:

Վերոհիշյալը հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմանը:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ նման պայմաններում «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվելու «Յդկատ» ՍՊԸ-ն, ով առաջարկել է 16,366,100 ՀՀ դրամ, մինչդեռ «Դը բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից նույն Ընթացակարգով առաջարկված գինը կազմում է ընդամենը 15,000,000 ՀՀ դրամ, որից ակնհայտ է դառնում, որ Ընկերության հայտը մերժելու արդյունքում պետության բյուջեին հասցվելու է 1,366,000 ՀՀ դրամի վնաս, այն դեպքում, երբ «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է իր ստանձնած պարտավորությունները և ներկայացրել պահանջված պաստաթղթերը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նմանատիպ փաստական հանգամանքներում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բովարարվել են նմանատիպ բողոքները (օրինակ, ԳԲԽ-ԷՍ-2018/108,ԳԲԽ-ԷՍ-2018/79 և այլն):

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1.Պարտավորեցնել «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.02.2019թ. նիստի թիվ 2.1. արձանագրության 2.1 կետով «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.02.2019թ. նիստի թիվ 2.1 արձանագրության 2.1 կետով «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո ընդունած բոլոր մյուս որոշումները»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը, Արթուր Պարանյանը և Արմեն Սեդրակյանը:

2. <u>ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշման հարցմանն ի պատասխան՝ Բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, ինչպես նաև gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստը սպասարկող կազմակերպության կողմից տրամադրված գրությունն առ այն, որ 2019 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 16:42 «Դե Բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից հաղորդագրություն չի ստացվել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Հրաչյա Մանուկյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Դե Բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.02.2019թ. նիստի թիվ 2, 27.02.2019թ. նիստի թիվ 2.1 արձանագրությունները, ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կարիքների համար ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դե Բեստ Շին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 20.02.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

- 4-րդ կետի համաձայն՝ «Դե Բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 15,000,000 ՀՀ դրամ:

- 6-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Դե Բեստ Շին» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

-10-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

27.02.2019թ. թիվ 2.1 արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին ուղարկել է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն Ընկերությունը չի ներկայացրել որևէ փաստաթուղթ:

Նույն արձանագրության 2.1 կետով Հանձնաժողովը որոշել է «Դը բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն 04.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունն իր (the.best.shin@mail.ru) էլեկտրոնային հասցեին armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ստացել է ծանուցում, որով Պատվիրատուն պահանջել է ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ ՀՀ ԱԳ

կադաստրի կոմիտեի հանձնաժողովի քարտուղարի gnumner@cadastre.am էլեկտրոնային հասցեին: Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ Ընկերության the.best.shin@mail.ru էլեկտրոնային հասցեից 22.02.2019թ. ուղարկվել են Հանձնաժողովի կողմից պահանջված՝ որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Սակայն, ինչպես հետագայում պարզվել է, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Ս.թ. փետրվարի 27-ին՝ տեղեկանալով Ընկերության հայտը մերժելու որոշման մասին՝ Ընկերության ներկայացուցիչը նամակ է ուղարկել Պատվիրատուին, որով խնդրել է վերջինիս ուշադիր զննել էլեկտրոնային փոստը, քանի որ 22.02.2019թ. ժամը 16:41 ուղղարկվել են որակավորման փաստաթղթերը, որին ի պատասխան Պատվիրատուի գնումների կազմակերպման բաժինը պատասխանել է, որ սահմանված ժամկետում Ընկերության որակավորումը հիմնավորող փաստաթղթերը gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստին չեն ստացվել, որի հետևանքով գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը: Այնուհետև, Ընկերության ներկայացուցիչն այցելել է Պատվիրատուր գնումների կազմակերպման բաժին, տեղում բացել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին պատկանող the.best.shin@mail.ru էլ. փոստը և ներկայացրել 22.02.2019թ. Ընկերության կողմից որակավորման փաստաթղթերն ուղարկված լինելու համապատասխան ապացույցը: «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն Ընկերության the.best.shin@mail.ru էլեկտրոնային փոստից Պատվիրատուի gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստին վերահասցեագրել է (forward) 22.02.2019թ. որակավորման փաստաթղթերն ուղեկցող նամակը՝ որպես ապացույց առ այն, որ սահմանված ժակետում ներկայացվել են պահանջված փաստաթղթերը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային փոստին բողոքաբերի կողմից նշված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ստացվել, և որպես ապացույց ներկայացրեց նաև gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստը սպասարկող կազմակերպության կողմից տրամադրված գրությունն առ այն, որ 2019 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 16:42 «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից որևէ հաղորդագրություն չի ստացվել: Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ Ընկերության աշխատակիցն այցելել է Պատվիրատուի

գնումների կազմակերպման բաժին, տեղում բացել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի էլ. փոստը և ներկայացրել որակավորման փաստաթղթերն ուղարկված լինելու ապացույցը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը համակարգչի միջոցով Բողոքներ քննող անձին ցույց տվեց, որ 22.02.2019թ. the.best.shin@mail.ru էլեկտրոնային փոստից Պատվիրատուի gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստին ուղարկել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև՝ 28.02.2019թ. the.best.shin@mail.ru էլեկտրոնային փոստից նույն փաստաթղթերը վերաուղարկվել են Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները:
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով

ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

- 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

- 7.19 կետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից նույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտի հավելված 1-ում նշված է the.best.shin@mail.ru էլեկտրոնային հասցեն:

- «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու հիմնավորմամբ:

- Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց վերաբերելի ապացույցներ առ այն, որ Ընկերության the.best.shin@mail.ru էլեկտրոնային հասցեից 22.02.2019թ. Պատվիրատուի gnumner@cadastre.am էլեկտրոնային հասցեին ուղարկվել են Ընկերության որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև՝ 28.02.2019թ. the.best.shin@mail.ru հասցեից նույն փաստաթղթերը վերաուղարկվել են Պատվիրատուի նույն էլեկտրոնային հասցեին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերության the.best.shin@mail.ru էլեկտրոնային հասցեից վերջինիս որակավորումը հիմնավորող փաստաթղթերը Հրավերով սահմանված ժամկետում ուղարկվել են Պատվիրատուի gnumner@cadastre.am էլեկտրոնային հասցեին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Դը Բեստ Շին»ՍՊԸ-ի կողմից ըստ էության կատարվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 04.03.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- 27.02.2019թ. նիստի թիվ 2.1. արձանագրության 2.1 կետով «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
- 27.02.2019թ. նիստի թիվ 2.1. արձանագրության 2.1 կետով «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո ընդունած բոլոր մյուս որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ